



ՀԱՎԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՒ  
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA  
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE  
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY  
HAIA-5

---

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА  
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ  
ХАИА-5

YEREVAN  
IAE PUBLICATION 2023  
ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ - 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՒ  
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
5

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

**Published by decision of the Scientific Council of the Institute of  
Archaeology and Ethnography, NAS RA**

**Խմբագրական խորհուրդ**

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավերիսյան, Ասրղիկ  
Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուսյո Թրախնա,  
Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան, Թամար  
Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն  
Մարտյան, Համլեր Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ,  
Նվարդ Վարդանյան (պատասխանատու խմբագիր),  
Պարթիկ Տոնապետյան, Պիրեր Քաուի

**Editorial Board**

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben  
Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan,  
Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian,  
Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith,  
Giusto Traina, Nvard Vardanyan (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բնագիտության՝ մինչ օրս չուսարանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                              |            |
|--------------------------------------------------------------------------------------------------------------|------------|
| <b>I. ՀՈՒՆԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ</b>                                                                           | <b>7</b>   |
| <i><b>Քենիկ Վարդանյան</b></i>                                                                                |            |
| Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կետերը                                                            | 8          |
| <i><b>Հենրիկ Դանիելյան</b></i>                                                                               |            |
| «Կիլիկյան» ամրոցների ֆենոմենը՝<br>Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով                               | 26         |
| <i><b>Լևոն Մկրտչյան</b></i>                                                                                  |            |
| Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները                                                    | 37         |
| <i><b>Արմինե Գաբրիելյան</b></i>                                                                              |            |
| Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմագարդ խեցեղենը                                                                | 45         |
| <i><b>Ռուզան Փալանջյան</b></i>                                                                               |            |
| Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող<br>հնագիտական գտածոներ Վայոց ձորից                              | 57         |
| <i><b>Դիանա Միրիջանյան</b></i>                                                                               |            |
| Հայաստանի միջնադարյան քարե տապանները                                                                         | 66         |
| <i><b>Արսեն Հարությունյան</b></i>                                                                            |            |
| Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը                                                                  | 76         |
| <b>II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>                                                                      | <b>95</b>  |
| <i><b>Նվարդ Վարդանյան</b></i>                                                                                |            |
| Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.<br>ավանդույթի հարատևումը մեր օրերում                        | 96         |
| <i><b>Սմբար Հակոբյան</b></i>                                                                                 |            |
| Մահը հայկական ֆեյսբուքում.<br>ավանդական, մոդեռն, թե՛ պոստմոդեռն սուգ                                         | 109        |
| <b>III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ</b>                                                                                       | <b>123</b> |
| <i><b>Նարինե Շամանյան</b></i>                                                                                |            |
| Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում<br>(ավանդույթ և արդիականություն)                            | 124        |
| <i><b>Հայարիկ Անանյան</b></i>                                                                                |            |
| Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի<br>(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում | 137        |

|                                                                                                                                               |     |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| <b>IV. ԲԱՆԱՅՑՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵՉԱՄՇԱԿՈՒՅԹ</b>                                                                                                      | 149 |
| <i>Սամվել Ռամազյան</i><br>Քաչալ Համգա. ընդհանուր կերպար հայկական և<br>թյուրքական էպոսներում                                                   | 150 |
| <i>Հասմիկ Մարիկյան</i><br>Օրորոցի լեզվամշակությամբ դրսևորումները հայ<br>իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ)                       | 172 |
| <i>Լուսինե Ազեկյուշ</i><br>Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը<br>և միջմշակությամբ հաղորդակցումը                                    | 182 |
| <b>V. ՊՈԼՍԱՅԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ</b>                                                                                                            | 195 |
| <i>Սարվինե Մարկոսյան</i><br>Ներհակությունները պոլսահայ համայնքում.<br>արևմտահայերի ազգային սահմանադրության<br>հաստատման շուրջ (1856–1863 թթ.) | 196 |
| <b>VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ</b>                                                                                                                       | 207 |
| <i>Մարիամ Մարիբեկյան</i><br>Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության<br>պատմությունից                                                   | 208 |
| <i>Յարութին Խաչատուրեան</i><br>Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ                                                               | 214 |
| <b>VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ</b>                                                                                                                  | 225 |
| <i>Արման Մադոյան</i><br>Հակոբ Չոլաքյան - 75                                                                                                   | 226 |
| <b>ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ</b>                                                                                                           | 233 |
| <b>ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ</b>                                                                                                      | 276 |

ՀԱՅԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՒ  
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
5

### III

ՊԱՐ ԵՒ ԾԵՍ

## ՉՈՒԲԲԱԶԻ (ՓԱՅՏԱԽԱՂ) ԵՒ ԴԱՍՏՄԱԼԲԱԶԻ (ԹԱՇԿԻՆԱԿՆԵՐՈՎ ՊԱՐ) ՊԱՐԵՐՆ ԻՐԱՆԱՅԱՅԵՐԻ ՊԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանում գործող ավանդական երգի-պարի խմբերն իրենց պարացանկում հաճախ են ընդգրկում իրանահայերի՝ մասնավորապես փերիահայերի պարեր: Պատճառը պարագետներ Ժենյա Խաչատրյանի ու Ռուդիկ Հարոյանի արխիվներում եղած և համացանցում տարածված Աշտարակի «Փերիա» խմբի տեսանյութերն են, որոնք թույլ են տվել որոշ պարեր վերականգնել և կրկին պարել: Կատարվող պարերից բավական տարածված և տպավորիչ են չուբբազին ու դաստմալբազին, որոնց առնչությամբ էլ կատարվել է մեր հետազոտությունը:

Թեև այս պարերը գործնականում տարածված են, բայց դրանց մասին տեղեկություններն ու ուսումնասիրությունները կցկտուր են, ոչ ամբողջական, ինչն ակնառու է նաև իրանահայերի մյուս պարերի պարագայում:

Հոգվածում փորձել ենք տալ այս երկու պարերի բնութագրերը՝ դրանք հնարավորինս ամբողջական ներկայացնելով. պարանուն, պարաքայլ, դրանց գուգահեռները Իրանում ապրող այլ ժողովուրդների կատարմամբ, դրանց վերափոխումներն այսօր գործող ավանդական խմբերի կողմից բեմական կատարումների ժամանակ:

*Հիմնաքառեր*<sup>1</sup> պար, իրանահայեր, դաստմալբազի, չուբբազի, կատարման ոճ, բեմադրություն, երաժշտություն:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չուբբազի և դաստմալբազի պարերի հետ կապված շրջանառվում է միայն հետևյալ տեղեկատվությունը՝ *չուբբազին* հայտնի է որպես տղամարդկանց պար: Ըստ ենթադրությունների՝ ռազմական պար է, քանի որ պարում են տղամարդիկ, որոնք փայտերով հարվածում են միմյանց: Իսկ *դաստմալբազին* պարում են կանայք, հարսանեկան պար է: 1980-ական թթ. այս պարերը կատարել են հայրենադարձ իրանահայերից կազմված խմբերը, որոնցից շատ քիչ տեսագրություններ կան պահպանված, իսկ նրանց սերունդներն արդեն չեն պարում: Տեսանյութերով մեզ հասած պարերի մեղեդին ու շարժումները հստակ են, բայց շատ դեպքերում հայտնի չէ պարանունը:

Կան իրանահայ ուսումնասիրողներ, հեղինակներ, որոնք իրենց հիշողություններն են գրել պարերի մասին, կամ բանահավաքչական աշխատանք են կատարել Իրանի հայաբնակ այն գավառում, որն իրենց ծննդավայրն է եղել: Մրանք տպագրված կամ արխիվային նյութեր են<sup>1</sup>, որոնք թույլ են տալիս պարի

<sup>1</sup> Մարեան 1980; Մինասյան 1998; Հովսեփյան 2009; Երեմյան 1919; Հարոյան 1988; Ղարախանյան 2013; Ղարախանյան Ա. և այլք 1976:

մասին առաջնային բնութագրերը վեր հանել՝ պարային քայլեր, նկարագրություններ, բռնվածք, պարանունների հետ կապված տեղեկություններ: Սակայն այս նյութերը դարձյալ ամբողջական չեն, քանի որ ուսումնասիրություններն արվել են գավառի ընդհանուր նկարագրության համատեքստում, պարերին անդրադարձել են հպանցիկ՝ կարճ նկարագրություններով, առանց մեղեդուն անդրադառնալու:

Արխիվային նյութերը, տեսանկարահանումները, գիտական գրականությունը թույլ են տալիս պատմահամեմատական մեթոդով տալ պարերի բնութագիրը, կատարման միջավայրը, կենսոնակությունը և կատարել որոշակի եզրահանգումներ:

Ուսումնասիրությունները թույլ են տալիս պարզորոշ տեսնել, որ *դասարմալբազին* ու *չոքբազին* կատարում են նաև Իրանում բնակվող դաշղայիներն (թյուրքալեզու ցեղ) ու բախտիարի լուրերը (Իրանում ապրող ամենամեծ քոչվոր ցեղերից), որոնց շրջանում մինչ օրս դրանք լայն տարածում ունեն: Ուստի համացանցում եղած տեսանյութերի միջոցով համեմատություն ենք արել նաև երեք ժողովուրդների նույն պարի կատարման ոճերի ու պարաքայլերի վերաբերյալ:

Փերիահայերի պարերը մեր օրերում տեղ են գտել մի շարք ավանդական երգի-պարի խմբերի («Մասունք», «Վերադարձ» «Վարք հայոց») պարացանկում, որոնք երբեմն ներկայացվում են թատերական տարրերով: Մեզ համար առանձին քննարկման թեմա է նաև այն, թե բեմում նոր խմբերը ինչպես են վերափոխում այս պարերը, և արդյոք կարողանում են պահպանել պարը կրողների ոճային առանձնահատկությունները:

### ՉՈՒԲԲԱԶԻ

*Չոքբազին* պարսկերեն բառ է, *չոք* նշանակում է «*փայլ*», *բազի* «*խաղ*»: Խորասանի պարսկախոս քոչվորների, ինչպես և հայերի մեջ, *բազի* «*խաղ*» բառն ունի նույն նշանակությունը, ինչ «*պարը*»<sup>2</sup>: Առավելապես տարածված է եղել Իրանի Փերիա և Չարմահալ գավառների բնակավայրերում՝ հայերի, դաշղայիների և լուրերի մեջ: Պարում են զույգ տղամարդիկ՝ պատկերելով մենամարտ, որտեղ կարող են ցուցադրել իրենց ուժն ու ճարպկությունը: Մեկը մեծ մահակով է պարում, մյուսը՝ բարակ, ճկուն ճիպոտով: Այն բավականին վտանգավոր պար է՝ ճիպոտի հարվածները կարող են լուրջ վնասներ հասցնել պարողներին, ուստի մասնակցում են հասուն և պարին լավ տիրապետող տղամարդիկ<sup>3</sup>: Պարը ռիթմիկ է, բայց շարժումները, փայտերի հարվածները կանոնակարգված չեն, և կատարման որևէ օրինաչափություն չկա: Հարձակվողը հարվածելու մեկ հնարավորություն ունի: Անկախ նրանից՝ նա հարվածում է թե վրիպում, պետք է փոխի իր դերը պաշտպանվողի հետ: Սովորաբար զույգերից յուրաքանչյուրը երկու դերերն էլ խաղալու հնարավորություն է ունենում, իսկ

<sup>2</sup> <https://asemooni.com/dancing-in-the-tribe-1026>, դիտումը՝ 20.02.2023:

<sup>3</sup> Երեմեան 2016, 218–220:

հետո կան նոր հարձակվող է մտնում, կան երկու խաղացողները հեռանում են, և նոր զույգը միասին մտնում է խաղի մեջ<sup>4</sup>։ Այն զգայական է ու ստեղծագործական։ Միակ օրինակափությունը ճիպոտով հակառակորդի ոտքերին հարվածելն է (ծնկից ներքև) և վերջինիս՝ այդ հարվածից ճարպկորեն խույս տալը։

Հայաբնակ տարբեր գավառներում այս պարը տարբեր անվանումներ է ունեցել։ Օրինակ՝ Չարմահալում կոչվել է *դոռնաբազի* (պարսկերենով նշանակում է սագի կամ դոռնայի խաղ, պար) կամ *թարքաբազի*<sup>5</sup>, իսկ Փերիայում՝ *չոփչոփի* (փայտախաղ) կամ *չոքքազի*։ Լևոն Մինասյանը, որպես Փերիայում կատարվող պար, նշում է *չոփչոփի* անվանումով<sup>6</sup>, իսկ Ռուդիկ Հարոյանը գրառել է Հովհաննես Գրիգորյանից՝ *չոքքազի* անվամբ<sup>7</sup>։ Ղաշղայիներն ու լուրերը *չոքքազի* են անվանում, երբեմն էլ՝ *թարքաբազի* (պարսկերեն բառ է, նշանակում է ճյուղերով/ճիպոտներով պար)<sup>8</sup>։

Հեղինակներից շատերը, որոնք անդրադարձել են չուքբազին, նշում են որպես լուրերից և ղաշղայիներից փոխառված պար։ Անդրանիկ Սարյանը պարի նկարագրության հետ մեկտեղ տալիս է նաև պարի ազգային պատկանելության մասին տեղեկություն՝ նշելով, որ այս պարի արմատները տանում են դեպի ղաշղայիների ժողովրդական պարերը, որոնցից փոխանցվել է բախտիարներին և Չարմահալի հայերին։ Հին ժամանակներում այս խաղը համարյա անձանոթ է եղել Իրանի արևմտյան հատվածում ապրող հայերին (Սիրաք, Ահմադաբադ, Բալըղլու և այլն), որոնք հեռու են գտնվել ղաշղայիների ճանապարհից և ազդեցությունից<sup>9</sup>։ Աբրահամ Ղարախանյանը այս պարի մասին խոսում է որպես հնում բնիկներից վերցրած սովորություն<sup>10</sup>։ Ծատուր Զարգարյանը նույնպես անդրադարձել է այս պարի փոխառված լինելուն՝ նշելով միայն Սպահան նահանգում և նրա շրջակա հայկական բնակավայրերում տարածված լինելու մասին<sup>11</sup>։

Գրեթե բոլոր հեղինակները չուքբազին որպես հարսանեկան պար են նկարագրում։ Օրինակ՝ Վ. Ղարախանյանը մի դրվագ է հիշում. «Պսակից հետո, երբ հյուրերը հավաքվում էին հարսանքատանը, երիտասարդները զուռնա դիլի հնչյունների տակ բակում սկսում էին հանրահայտ «դոռնաբազի» պարը<sup>12</sup>։ ...Այսպիսի մի «դոռնաբազի»-ի ականատես եմ եղել 1945 թ. օգոստոսի 5-ին իմ քույր ԱղաՎսու հարսանիքի օրը։ Երեխաներով կանգնել էինք իմ հայ-

<sup>4</sup> <https://www.iranicaonline.org/articles/cub-bazi-stick-game-also-raqs-e-cub-stick-dance-a-category-of-folk-dance-found-all-over-persia-hamada-and-dist>, դիտումը՝ 20.02.2023:

<sup>5</sup> Ղարախանյան 1976, 342:

<sup>6</sup> Մինասյան 1998, 410–411:

<sup>7</sup> Հարոյան 1988, 11:

<sup>8</sup> <https://www.iranicaonline.org/articles/cub-bazi-stick-game-also-raqs-e-cub-stick-dance-a-category-of-folk-dance-found-all-over-persia-hamada-and-dist>, դիտումը՝ 20.02.2023:

<sup>9</sup> Սաթեան 1980, 530:

<sup>10</sup> Ղարախանյան 1976, 342:

<sup>11</sup> Զարգարյան 1987, 10:

<sup>12</sup> Ղարախանյան 2013, 426:

րական տան բաց պատշգամբում և «թամաշա էինք անում» ներքևում «դուռնա-բազի» պարողներին»<sup>13</sup>:

Լ. Մինայանը հարսանիքների ժամանակ կատարվող պարերի շարքում նկարագրում է նաև «ջօփջօփին» (չուբբազին)՝ իր կատարման առանձնահատկություններով<sup>14</sup>: Ա. Ղարախանյանը նույնպես պարի նկարագրության հետ միաժամանակ նշում է դրա կատարման տեղը. «Այն փարփորինակ մի մրցախաղ է հնում բնիկներից սովորություն վերցրած, որին մասնակցում էին երիտասարդներ և երբեմն էլ միջահասակ մարդիկ հարսանիքների ժամանակ՝ զուռնա դիդի նվագակցությամբ»<sup>15</sup>:

### Հուբբազիի զուգահեռները դաշդայիների և լուրերի մեջ

Պարսկական աղբյուրներում նշվում է *չուբբազի* խաղ-պարի երկու տարբերակ, որոնք սովորաբար հարսանեկան տոնակատարության մի մասն են կազմում: Երկու տարբերակն էլ մինչ օրս հավասարապես տարածված է թե՛ դաշդայիների, թե՛ լուրերի մեջ: Առաջին տարբերակը զուգապար է, իսկ երկրորդը՝ խմբային պար: Առավել տարածված առաջին տարբերակում պարողները գույգ տղամարդիկ են, իսկ պարը բնութագրվում է նույն կերպ, ինչպես իրանահայերի մեջ (նկարագրությունը վերևում արդեն տվել ենք): Իսկ երկրորդ տարբերակը նկարագրվածից բավականին տարբեր է, մարտական բնույթ չի կրում, նույնիսկ կապվում է գարնան ավետման ծեսի հետ<sup>16</sup>: Դասավորությունը երկու շարքով՝ դեմ դիմաց կանգնած գույգերով, կամ շրջանաձև: Յուրաքանչյուր պարողի ձեռքին լինում է գույգ՝ 18–25 սմ երկարությամբ փայտ, որոնցով մե՛կ իրենց փայտիկներով են իրար հարվածում, մե՛կ մյուս պարողների փայտերին: Այս տարբերակում նկատվում է շարժումների և փայտերի հարվածների որոշակի ռիթմիկ օրինաչափություն: Այն կարելի է պարել գույգով կամ շրջանով՝ ներառելով և՛ կանանց, և՛ տղամարդկանց<sup>17</sup>: Հարվածները առաջին տարբերակի նման ուժգին չեն, ավելի ձևական են, խաղային և ոտքերի փոխարեն հարվածում են միմյանց փայտիկներին:

### Հուբբազի պարի կատարման համեմատական քննություն

Հետաքրքրական է, որ *չուբբազի* խաղ-պարի առաջին տարբերակը Իրանում ապրող ժողովուրդները (դաշդայիներ, լուրեր) ու իրանահայերը կատարում են նույն պարային քայլերով, նույն մեղեդիով<sup>18</sup>: Պարի կատարման մեջ

<sup>13</sup> Ղարախանյան 2013, 427:

<sup>14</sup> Մինայան 1998, 409–411:

<sup>15</sup> Ղարախանյան 1976, 342:

<sup>16</sup> Նմանատիպ պարերը ներառված են օրացուցային տոների մեջ: Օրինակ՝ Մարանդում՝ Ատրպատականում, երբ եղանակը սկսում է տաքանալ (փետրվարի վերջին և մարտի սկզբին), նշում են ձմռան ավարտն ավետող հին ծեսը (qīsdān ʿēkdīm): Տոնի ժամանակ կատարվում է չուբբազիի երկրորդ տարբերակը, որտեղ մի մարդ պարում է երկու փայտերով՝ դրանք իրար հարվածելով դափի ռիթմիկ նվագակցությամբ. տե՛ս Friend 1993:

<sup>17</sup> <https://www.iranicaonline.org/articles/cub-bazi-stick-game-also-raqs-e-cub-stick-dance-a-category-of-folk-dance-found-all-over-persia-hamada-and-dist>, դիտումը՝ 20.02.2023:

<sup>18</sup> <https://www.youtube.com/watch?v=LyOdIrJKol0>, 30.11.2022, դիտումը՝ 20.02.2023: Տեսանյու-

միայն մեկ տարբերություն կա. դաշղայիների և լուրերի պարագայում հաճախ են լինում կանանց մասնակցությամբ կատարումներ՝ կատակի բովանդակությամբ<sup>19</sup>, իսկ իրանահայերի դեպքում այն միայն տղամարդկանց կատարմամբ է:

Զուրբազի պարի *երկրորդ տարբերակի* մասին խոսելիս պետք առանձնացնենք մի կարևոր փաստ: Մեր ունեցած իրանահայ գրականության մեջ չկա որևէ նկարագրություն կամ ակնարկ՝ երկրորդ տարբերակի հետ կապված, բայց վերջին 30 տարիներին տարբեր առիթներով արված տեսանյութերում հանդիպում է *չուբբազի կամ չոփչոփի* անվամբ իրանահայերի կատարմամբ<sup>20</sup> փայտերով պար՝ որը պարում են ոչ թե զույգ տղամարդիկ, ինչպես առաջին տարբերակն է, այլ՝ խմբով, բայց քայլերը նման են զույգով պարվող չուբբազիին: Իրանահայերը կատարում են մեծ թռիչքներով պարային քայլերով, հարվածներն ու քայլերը իմպրովիզային են, պարում են շրջանով, հետո նորից վերադասավորվում են, դառնում չկանոնակարգված երկու գծաշար կամ գծաշարից են դառնում շրջան<sup>21</sup>: Այս տարբերակի մեղեդին հստակեցնելու խնդիր ունենք, քանի որ մեր ձեռքի տակ գտնվող տարբեր նյութերում նույն պարը կատարվում է տարբեր մեղեդիների ներքո, միայն պահպանվում է ռիթմը և մոտ է պարի առաջին տարբերակի (զույգերով կատարման) մեղեդուն: Իրանահայերի կատարմամբ չուբբազիի առաջին և երկրորդ տարբերակները համեմատելիս պետք է ընդգծել, որ կարծես թե տարբեր պարեր են, բայց միևնույն ժամանակ ունեն մեղեդու և պարաքայլերի ոճային նմանություն, և երկու դեպքում էլ հստակ երևում է ռազմական բովանդակություն: Դաշղայիների ու լուրերի պարաքայլերն ավելի մանր են, փայտի հարվածները հստակ են՝ մեղեդուն համահունչ, կան կքանիստեր ու կտրուկ պտույտներ<sup>22</sup>: Մեղեդին սկսվում է դանդաղ, հետո՝ արագանում: Ի տարբերություն իրանահայերի՝ դաշղայիների և լուրերի երկրորդ տարբերակը չունի ռազմական բովանդակություն: Մա նման չէ առաջին տարբերակին, ոչ էլ իրանահայերի պարած երկրորդ տարբերակին, քանի որ և՛ մեղեդին է տարբեր, և՛ պարաքայլերը: Երկրորդ տարբերակի երեք ժողովուրդների կատարումներում միակ ընդհանրությունը պարողների ձեռքում եղած փայտերն են:

Ըստ մեր դիտարկումների՝ չուբբազիի առաջին տարբերակը գրեթե առանց փոփոխության փոխառված է, սակայն նույնը չենք կարող ասել երկրորդ տարբերակի մասին, որը գուցե մասնակի ազդեցություն է կրել, բայց նաև ունի ինքնատիպություն և ընդգծված տարբերվում է նշված ազգերի կատարումներից:

թում չուբբազին կատարում են բախտիարները, իսկ իրանահայերի կատարմամբ չուբբազիի քիչ տեսանյութեր կան, հիմնականում տեքստային նկարագրություններ են: Ուշագրավ է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կազմակերպած ազգագրական փառատոնի ժամանակ իրանահայերի կատարած չուբբազին: Տես ԱՓՏ 1988:

<sup>19</sup> <https://www.youtube.com/watch?v=rx6aFLOH414>, 24.02.2016, դիտումը՝ 20.02.2023:

<sup>20</sup> <https://www.youtube.com/watch?v=s2oKaUPT4-8>, (տեսանյութը՝ Խաչատրյան Ժ. Կ. արխիվից), 06.09.2016, դիտումը՝ 20.02.2023:

<sup>21</sup> Դիլանյան 2004:

<sup>22</sup> <https://www.aparat.com/v/KFZ5m>, 28.09.2018, դիտումը՝ 20.02.2023:

## Չուբբազիի բեմականացում

Արդիական կատարումներից կարելի է նշել մի քանի խմբերի մասին, որոնք բեմականացրել են *չուբբազիի* միայն երկրորդ տարբերակը, իսկ զույգով տարբերակը այսօրվա խմբերին կարծես թե ծանոթ չէ: Վերջին տարիներին տեղական խմբերից «Վերադարձը» ներկայացրեց *չուբբազիի* խմբակային տարբերակը<sup>23</sup>: Տղամարդիկ, դեմ դիմաց կանգնած, պարում են փայտերը ձեռք-ներին, հետո զուգահեռ շարքերը վերադասավորվում են շրջանաձև: «Վերադարձի» աղբյուրը եղել է Ժենյա Խաչատրյանի արխիվում եղած տեսանյութը, որտեղ փերիահայերից կազմված խումբը պարում է չուբբազի<sup>24</sup>: «Վերադարձը» քայլերի և ռճային առումով բավականին ճշգրիտ վերարտադրել է տեսանյութի պարը, սակայն այստեղ, ի տարբերություն պարը կրողների, նկատվում են խիստ կանոնակարգված գծաշարեր, հստակ քայլեր և համաչափություն՝ նվագագույնի հասցնելով կատարողների երևակայական, ստեղծագործական, հանկարծակիության մոտեցումը: Մեղեդին նույնպես չի հաջողվել ճշտությամբ վերարտադրել, այլ ստացվել է բնօրինակին մոտ տարբերակ:

## Դաստմալբազի

Դաստմալբազին պարսկերեն բառ է՝ «*դասարմալ*» նշանակում է թաշկինակ, իսկ *բազի*՝ «խաղ»: Պարի ամենաընդգծված բնութագրիչը թաշկինակներն են: Տարածված է հատկապես Իրանի հայաբնակ Չարմահալ և Փերիա գավառներում: Հայաստանյան միջավայրում *դասարմալբազիի* փոխարեն հիմնականում կիրառվում է *թաշկինակներով պար* անվանումը: Շարքում կամ իրար ետևից են կանգնում<sup>25</sup>, կամ դեմքով դեպի կենտրոնը<sup>26</sup>, կամ մի ձեռքում թաշկինակն է, իսկ մյուսով բռնում են կողքինի գոտին<sup>27</sup>: Եվ դաշղայիների ու լուրերի, և՛ իրանահայերի շրջանում հանդիպում են թաշկինակների կիրառմամբ, պարաքայլերի նմանությամբ, դիթմի պահպանմամբ, բայց քայլերի տարբեր հաշիվներով և երաժշտության փոփոխությամբ պարեր, որոնք ընկալվում են որպես մեկ պար՝ *դասարմալբազի*: Դաշղայիներն ու լուրերը բոլոր տարբերակների դեպքում էլ, եթե թաշկինակ են օգտագործում, պարն անվանում են *դասարմալբազի*<sup>28</sup>, իսկ իրանահայերը տարբեր անվանումներ են տալիս:

Իրանահայերից թաշկինակների կիրառմամբ գրառված և պահպանված պարերից են՝ *թաշկինակներով պարը*, *չուփի պարը*, *յալյան*, *շուրջպարը*, *խունգին*, *հարի յասան*: Թեև այս բոլոր տարբերակները իրանահայերը կատարում

<sup>23</sup> <https://www.youtube.com/watch?v=v-b5sf2FeKg>, 25.07.2014, դիտումը՝ 20.02.2023:

<sup>24</sup> <https://www.youtube.com/watch?v=s2oKaUPT4-8> (տեսանյութը՝ Խաչատրյան Ժ.Կ. արխիվից), 06.09.2016, դիտումը՝ 20.02.2023:

<sup>25</sup> <https://www.youtube.com/watch?v=s2oKaUPT4-8> (տեսանյութը՝ Խաչատրյան Ժ.Կ. արխիվից), 06.09.2016, դիտումը՝ 20.02.2023:

<sup>26</sup> <https://www.youtube.com/watch?v=Zl4w20-w2E8&t=11s> (տեսանյութը համացանցում տեղադրված է Հարոյան Ռուդիկի ընտանեկան արխիվից), 09.04.2014, դիտումը՝ 20.02.2023:

<sup>27</sup> Դիլանյան 2004:

<sup>28</sup> <https://www.youtube.com/watch?v=Ga9pydE4dW8>, 07.05.2008, դիտումը՝ 20.02.2023: Այստեղ բախտիարցիների կատարմամբ դաստմալբազիի գրեթե բոլոր ձևերն ընդգրկված են:

են որպես առանձին պար, բայց, դաշդայինների ու լուրերի օրինակով, սրանք փորձել ենք խմբավորել մեկ պարատեսակի մեջ՝ որպես *դասարմալբազի*, քանի որ տարբեր անուններով, բայց իրար նման պարեր են՝ քայլերի քանակի, շրջանում կանգնած դիրքի փոփոխությամբ: Բոլոր դեպքերում էլ թաշկինակներ կան:

*Թաշկինակներով պարը* կատարում են առանց ձեռքերը բռնելու, շրջանով կամ կիսաշրջանով, դեմքով դեպի կենտրոնը: Երկու անգամ չորս պարատուքով տեղաշարժվում են դեպի աջ, որից հետո չորս պարատուքով դարձում են կատարում՝ մեջքով շրջվելով դեպի կենտրոնը, հետո կրկին հետ դարձում անելով՝ ուղղվում են դեպի շրջանի ներսը: Թաշկինակներով պարի այս տարբերակը շատ տարբեր է մյուս ձևերից, որոնց նկարագրությունները կտանք ստորև: Այս պարաձևը փոխանցվել է երևանաբնակ փերիահայերից<sup>29</sup>:

*Չուփի պարը* տարածված պար է, որին մասնակցում են տղամարդիկ և կանայք, թաշկինակները ծածանելով օդում, պարում են շուրջանակի: Սա ունի մեկից ավելի եղանակներ, ու մարդիկ առանց ձանձրանալու երկար պարում են<sup>30</sup>: «*Չուփին*» թուրքերեն բառ է, նշանակում է տերևից էլ փոքր փայտիկ<sup>31</sup>: *Չուփին* իրանահայերի մեջ մի տեղ հանդիպում է որպես երկու սեռերի կողմից կատարվող պար<sup>32</sup>, մի տեղ՝ կանանց պար<sup>33</sup>: Այս պարի կատարողների կազմի մասին նյութերի աղության պատճառով խորը վերլուծություն չենք կարող անել, բայց, հաշվի առնելով պարանվան բացատրությունը՝ *փոքրիկ փայտիկ*, հնարավոր է, որ ինչ-որ ժամանակ այն կատարվել է նաև փոքրիկ փայտիկներով, որտեղից էլ առաջացել է պարանունը, հատկապես որ տեղական իրանական պարերում թաշկինակները հաճախ ունեցել են նաև զենքի նշանակություն<sup>34</sup>:

*Յայլա* պարում են մեկ ձեռքը մյուսի գոտուց բռնած, իսկ մյուս ձեռքին՝ թաշկինակ: Ձեռքերը պտտեցնելով ու թափահարելով՝ նվագի ելեէջների ներքո շարժում են ոտքերը մեկ, երկու առաջ և մեկ հետ<sup>35</sup>:

*Շորջպարը*<sup>36</sup> կատարում են դեմքով դեպի կենտրոն կանգնած, մի ձեռքին թաշկինակ, իսկ մյուսով բռնում են կողքինի գոտին: Ունի վեց պարաքայլ<sup>37</sup>:

*Խունգի* պարում են իրար ետևից կանգնած, ձեռքերին թաշկինակ, ունի վեց քայլ<sup>38</sup>: Այն գրավել է Փերիա գավառի Խունգ գյուղից և, հավանաբար, գյուղի անունով էլ կոչվել է:

<sup>29</sup> <https://www.youtube.com/watch?v=Zl4w20-w2E8&t=11s> (տեսանյութը համացանցում տեղադրված է Հարոյան Ռուդիկի ընտանեկան արխիվից), 09.04.2014, դիտումը՝ 20.02.2023:

<sup>30</sup> Սարեան 1980, 534:

<sup>31</sup> Պարանվան թարգմանության համար շտրիակալություն ենք հայտնում թուրքագետ Աննա Խաչատրյանին:

<sup>32</sup> Սարեան 1980, 534:

<sup>33</sup> Ղարախանյան Ա. 1976, 344:

<sup>34</sup> <https://lastsecond.ir/blog/9826-napkins-in-local-dances>, 18.06.2022, դիտումը՝ 20.02.2023:

<sup>35</sup> Մինասյան 1998, 410:

<sup>36</sup> Դիլանջյան 2004:

<sup>37</sup> Հարոյան 1988, 10:

<sup>38</sup> Հարոյան 1988, 8:

Հարի յասան կատարում են իրար ետևից կանգնած, թաշկինակները ձեռքերին, ունի ութ պարաքայլ<sup>39</sup>:

Անդրադառնալով իրանահայերի *դասարմալքազի* պարի *տարբեր անունների* բացատրությանը՝ պետք է նշել, որ սրանք թերևս տարբեր պարեր են, որոնց միացնող տարրը թաշկինակն է, իսկ անունների մոռացությունը հանգեցրել է բոլոր պարերի նույնացմանը, որի արդյունքում դրանք ստացել են ընդհանրական «թաշկինակներով պար» անունը: Կա՛մ էլ դա մեկ պար է՝ իր տարատեսակներով, որոնք իրանահայերը ժամանակի ընթացքում իրենց իմացած պարերի անուններով են կոչել, կամ էլ փորձել են, սիմվոլիկ անուններ տալով, գանազանել մեկը մյուսից: Նկարագրված պարերի զուգահեռները *դասարմալքազի* անունով տեսնում ենք դաշդայիների ու լուրերի մեջ:

### Պարի զուգահեռները դաշդայիների և լուրերի մեջ

Դաշդայիների և լուրերի պարն սկսվում է դանդաղ ռիթմով, հետո մի փոքր արագանում է, ապա վերածվում չափավոր ռիթմի: Պարում են շրջանով, մասնակցում են կանայք, աղջիկները և տղամարդիկ՝ յուրաքանչյուրի ձեռքում երկու թաշկինակ: Թափահարելով թաշկինակները՝ շարժվում են հետ ու առաջ: Արագ պարի ժամանակ պարողները թաշկինակները պտտում է գլխի շուրջը և դնում ուսերին, քայլերը հետ ու առաջ են գնում, բայց ավելի արագ<sup>40</sup>: Տղամարդկանց, կանանց և երկսեռ կատարումների պարաքայլերը միմյանցից չեն տարբերվում, նույն պարը կատարվում է մե՛կ տղամարդկանց կազմով<sup>41</sup>, մե՛կ կանանց<sup>42</sup>, մե՛կ երկսեռ կազմով<sup>43</sup>: Սա ավելի շատ նման է իրանահայերի չուփի պարին:

Եթե հաշվի առնենք, որ կան «*պղաների թաշկինակներով պար*» և «*աղջիկների թաշկինակներով պար*» անվանումները<sup>44</sup>, ապա պարզ է դառնում, որ ի սկզբանե պարողների կազմի հետ կապված եղել են տարրուներ. եղել են տեսակներ, որ պետք է միայն կանայք, և հակառակը՝ տեսակներ, որ միայն տղամարդիկ պետք է պարեին, գուցե դրանց մեջ եղել են նաև երկսեռ կազմով կատարվող տարբերակներ: Ամենայն հավանականությամբ ժամանակի ընթացքում, տարրուների վերացման պատճառով, սկսել են շատանալ երկսեռ կազմով տարբերակները: Պարաքայլերի հաշիվը ինչպես իրանահայերի մոտ է, չորս, վեց կամ ութ հաշիվ է, դասավորությունը իրար ետևից, կամ դեպի շրջանը

<sup>39</sup> Հարոյան 1988, 9:

<sup>40</sup> <https://lastsecond.ir/blog/9826-napkins-in-local-dances>, 18.06.2022, դիտումը՝ 20.02.2023:

<sup>41</sup> [https://www.aparat.com/v/EuXK1/%D8%AF%D8%B3%D8%AA%D9%85%D8%A7%D9%84\\_%D8%A8%D8%A7%D8%B2%DB%8C\\_%D9%84%D8%B1%DB%8C\\_%D8%B4%D9%87%D8%B1%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86\\_%D8%B4%D9%87%D8%B1%DA%A9%D8%B1%D8%AF](https://www.aparat.com/v/EuXK1/%D8%AF%D8%B3%D8%AA%D9%85%D8%A7%D9%84_%D8%A8%D8%A7%D8%B2%DB%8C_%D9%84%D8%B1%DB%8C_%D8%B4%D9%87%D8%B1%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86_%D8%B4%D9%87%D8%B1%DA%A9%D8%B1%D8%AF), 03.10.2018, դիտումը՝ 20.02.2023: Կատարում են տղամարդիկ:

<sup>42</sup> <https://www.youtube.com/watch?v=4EyzvFDYXLI>, 04.07.2020, դիտումը՝ 20.02.2023: Կանանց թաշկինակներով պարի կատարում, 6 քայլ:

<sup>43</sup> <https://www.youtube.com/watch?v=QsPOiD6Q6rE>, 22.11.2021, դիտումը՝ 20.02.2023: Թաշկինակներով պար կանանց և տղամարդկանց կատարմամբ, 6 քայլ:

<sup>44</sup> Օրինակ՝ Ժենյա Խաչատրյանի արխիվում կա աղջիկների թաշկինակներով պար և տղամարդկանց թաշկինակներով պար (տես Փերիա 2016):

կանգնած, երբեմն էլ մի ձեռքով կողքինի գոտին բռնած, իսկ մյուսը ազատ թաշկինակն է շարժում: Օրինակ՝ դաշդայինների և լուրերի չորս պարաքայլով *դասարմալքագին*<sup>45</sup> շարժումներով ամբողջությամբ չի կրկնում, բայց նման է իրանահայերի *թաշկինակներով պարին*, վեց պարաքայլով<sup>46</sup> նման է *շորջպար* և *խունգի* պարերին, ութ պարաքայլով<sup>47</sup> *հարի յասային*:

### Դաստմալքագի պարի կատարման համեմատական քննություն

*Պարողների կազմի* հետ կապված նույն հակասությանն ենք հանդիպում և՛ լուրերի ու դաշդայինների, և՛ իրանահայերի մեջ: Միևնույն պարը մի դեպքում միայն կանայք են պարում, մի դեպքում միայն տղամարդիկ, մի դեպքում էլ՝ երկսեռ կազմով: *Շարժումները դիպարկելիս* նաև նկատելի է, որ երկու ժողովուրդներն էլ պարում են կիսաշրջանով կամ շրջանով, թաշկինակներն օդում խաղացնելով: Պարաքայլերի քանակը հիմնականում չորս, վեց կամ ութ հաշիվ է, իսկ մեղեդին՝ տարբեր: Իրանահայերի այս պարի կատարումներում, ի տարբերություն դաշդայինների և լուրերի, քայլերն ավելի հստակ են, կան խորը ծնկածալեր, թաշկինակների խաղը համեմատաբար ավելի զուսպ է, ձեռքերն ու ոտքերը համաչափ են աշխատում: Դաշդայինների և լուրերի ոտքերի շարժումներն ավելի մանր են՝ սահելու նման, ոտքերը համեմատաբար ավելի պասիվ են, իսկ ձեռքերն՝ ակտիվ, և ունեն թաշկինակների ձևավոր պտույտներ: Թվում է, շարժումները նույնն են, բայց ոճերը խիստ տարբերվում են, նույնիսկ թաշկինակները պտտեցնելու ձևերն են տարբեր:

Այս երեք ժողովուրդների պարերի համեմատությունը թույլ է տալիս պնդելու, որ թեև պարանունը և պարաքայլերի հաշիվը նույնն է, կատարման ձևն ու ոճն այլ են: Ոճային տարբերությունն այնքան մեծ է, որ հաճախ չի էլ հասկացվում, որ նույն քայլերն են կատարվում: Ակնառու է, որ թաշկինակներով պարերում միախառնվել են հարևան ժողովուրդների և հայրենի պարերը, որոշ մասն էլ, եթե նույնիսկ փոխառված են հարևաններից, ապա դրանց վրա կա հայկական պարային մտածողության կնիքը:

### Դաստմալքագիի բեմականացում

Դաստմալքագիի երկու տարբերակ կա, որ ժամանակակից խմբերը պարում են, մեկը «*Վերադարձ*» և «*Վարք հայոց*» խմբերն են կատարում, մյուսը՝ «*Մասունքը*»: «*Վերադարձի*» կատարած տարբերակի պարաքայլերը համընկ-

<sup>45</sup> <https://www.youtube.com/watch?v=HHacs84LYIc>, 13.10.2018, դիտումը՝ 20.02.2023: Չորս պարաքայլով թաշկինակներով պար լուրերի կատարմամբ: 4-րդ քայլի փոխարեն դադար է, ոչ թե հստակ քայլ:

<sup>46</sup> [https://www.aparat.com/v/EuXK1/%D8%AF%D8%B3%D8%AA%D9%85%D8%A7%D9%84\\_%D8%A8%D8%A7%D8%B2%DB%8C\\_%D9%84%D8%B1%DB%8C\\_%D8%B4%D9%87%D8%B1%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86\\_%D8%B4%D9%87%D8%B1%DA%A9%D8%B1%D8%AF](https://www.aparat.com/v/EuXK1/%D8%AF%D8%B3%D8%AA%D9%85%D8%A7%D9%84_%D8%A8%D8%A7%D8%B2%DB%8C_%D9%84%D8%B1%DB%8C_%D8%B4%D9%87%D8%B1%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86_%D8%B4%D9%87%D8%B1%DA%A9%D8%B1%D8%AF), 03.10.2018, դիտումը՝ 20.02.2023: Թաշկինակներով պար տղամարդկանց կատարմամբ, 6 քայլ:

<sup>47</sup> <https://www.aparat.com/v/HuIdS>, 05.04.2022, դիտումը՝ 20.02.2023: Թաշկինակներով պար, 8 քայլ:

նում են Ռուդիկ Հարոյանի գրառած *Հարի յասա* պարի քայլերի հետ<sup>48</sup>: «Վերադարձը» վերադարձում է իրանահայերի պարաքայլերը նույնությամբ<sup>49</sup>, բայց նրանց կատարման մեջ բնական և ազատ շարժում չկա, նկատվում է բեմական կաշկանդվածություն, ավելի շատ շեշտված է համաչափ, քան թե զգայական կատարումը, մեղեդին փոփոխության է ենթարկված: «Մասունքի» կատարած տարբերակի պարաքայլերը համընկնում են վերը նկարագրված պարերից թաշկինակներով պարի քայլերին<sup>50</sup>: «Մասունքի» այս կատարումն առանձնացրել ենք որպես բեմադրված պար, քանի որ խումբը, որպես հարսանեկան պար, փորձել է այն տեղավորել հարսանեկան ծեսի մեջ:

Այսպես՝ աղջիկները պարում են, տղաները մի անկյունում հավաքված հետևում են և իբր իրենցից մեկի հավանած աղջկան են մատնացույց անում ու պարի վերջում փախցնում: Որպես այս գործողության շարունակություն՝ տեղի է ունենում հարսանիք<sup>51</sup>: Ինչ վերաբերում է պարի ոճին, ապա այստեղ ևս չկա բնական ազատություն, թեև կատարում են նույն քայլերը:

### Եզրակացություն

Իրանահայերը, լուրերը, դաշղայիները չուբբազին և դաստմալբազին, չնայած իրենց ոճային տարբերություններին, կատարում են հարսանիքների ժամանակ, և այս պարերի բովանդակային ընկալումները երեք ժողովուրդների համար նույնն են:

Իրանահայերի հիշյալ երկու պարերն իրենց տարատեսակներով կան փոխառված են Իրանի բնիկ ժողովուրդներից, որոնք համեմվել են հայկական պարային էլեմենտներով և ոճով, կան հայկական պարեր են՝ բնիկների պարերի ակտիվ ազդեցությամբ: Քիչ դեպքերում է, որ պարը փոխառված է առանց փոփոխության: Հաշվի առնելով մեր ուսումնասիրությունները՝ կարող ենք ասել, որ հայկական և Իրանի բնիկ ժողովուրդների պարերի ազդեցություններով ու միախառնումով իրանահայերի մեջ ձևավորվել է մի պարային մշակույթ, որի առանձնահատկություններն ու օրինաչափությունները համահունչ են նրանց կենցաղին և մշակույթին: Ուստի, այնքան էլ ճիշտ չենք համարում իրանահայերի այս պարերի դասակարգումը որպես հայկական կամ որպես Իրանի բնիկ ժողովուրդների մշակույթ: Սրանք (բացառությամբ չուբբազիի գույգով պարվող տարբերակի), իրենց ուրույն առանձնահատկություններով կարող են համարվել իրանահայերին բնորոշ պարեր՝ որպես առանձին պարային մշակույթ:

Ինչ վերաբերում է ավանդական երգի-պարի ժամանակակից խմբերին ու նրանց կատարումներին, պետք է նշենք, որ թեև նրանց կատարումները մի-

<sup>48</sup> <https://www.youtube.com/watch?v=CaMTxBcm96c&t=22s>, 02.10.2014, դիտումը՝ 20.02.2023:

<sup>49</sup> <https://www.youtube.com/watch?v=s2oKaUPT4-8> (տեսանյութը՝ Խաչատրյան Ժ.Կ. արխիվից), 06.09.2016, դիտումը՝ 20.02.2023:

<sup>50</sup> <https://www.youtube.com/watch?v=Zl4w20-w2E8&t=11s> (տեսանյութը համացանցում տեղադրված է Հարոյան Ռուդիկի ընտանեկան արխիվից), 09.04.2014, դիտումը՝ 20.02.2023:

<sup>51</sup> [https://www.youtube.com/watch?v=UCBtm\\_f9A9Q](https://www.youtube.com/watch?v=UCBtm_f9A9Q), 20.02.2017, դիտումը՝ 20.02.2023:

չոց են կենցաղավարումից դուրս մնացած պարերի պահպանման համար, սակայն դրանք հաճախ փոփոխությունների են ենթարկվում, քանի որ խմբերի մեծամասնությունը պարերը սովորում է ոչ թե բնական միջավայրում, պարի առաջնային կրողներից, այլ տեսանյութերով, կամ նրանցից, ովքեր պարի կրող չեն, այլ սովորել են որևէ պարուսույցից: Կատարվում են նույն պարաքայլերը, բայց չեն կարողանում վերարտադրել կրողների քայլային և մեղեդային ոճը, առանձնահատկությունը: Հաճախ կատարվում են նաև պարային բեմադրումներ՝ չխախտելով պարային քայլերը, բայց խախտելով ժողովրդական պարի տրամաբանությունը: Բեմն էլ իր հերթին որոշակի սահմանափակումներ է պարտադրում, որի պատճառով խմբերը կորցնում են բնականությունը, ֆոլկլորի անմիջականությունը:

### ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

**ՀԱԻ ԱԲԱ** – Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության

բաժնի արխիվ

**ԱՓՏ** – Ազգագրական փառատոնի տեսանյութեր

**ԵՐՊԻ** – Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### Արխիվային նյութեր

ՀԱՐՈՅԱՆ 1988

Հարոյան Ռ. Զ., Բանահավաքչական նյութեր (Փերիա) // Ընտանեկան արխիվ, Երևան, 1988, 42 թերթ:

ԱՓՏ 1988

Ազգագրական փառատոնի տեսանյութեր // Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի թանգարան (տեսաժապավեն - ԵՐՊԻ ազգագրական փառատոն 1988):

ՂԱՐԱԽԱՆՅԱՆ 1976

Ղարախանյան Ա. Հ., Իրանի Չհարմահալ գավառի հայերի ազգագրությունը // ՀԱԻ ԱԲԱ, ֆ. 93, մաս 3-րդ, Պատմաազգագրական նյութեր, 87 թերթ, 1976:

ԶԱՐԳԱՐՅԱՆ 1987

Զարգարյան Ծ. Գ., Պարսկաստանի Փերիա գավառի ազգագրական նյութեր // ՀԱԻ ԱԲԱ, ֆ. 28, 1987:

ԴԻԼԱՆՉՅԱՆ 2004

Դիլանչյան Դ., Փերիո Կրթասիրաց միության 75-ամյակը՝ տեսագրություն, 2004 // Ընտանեկան արխիվ (տեսանյութը տեղադրված է նաև համացանցում), URL: [https://www.youtube.com/watch?v=g\\_JcqYpamN4&t=153s](https://www.youtube.com/watch?v=g_JcqYpamN4&t=153s), դիտումը՝ 20.02.2023:

#### Ուսումնասիրություններ

ՂԱՐԱԽԱՆՅԱՆ 2013

Ղարախանյան Վ., Ղարախան-Բոնագաղթ, Երևան, Իրանագիտական կովկասյան կենտրոն, 2013:

ՄԻՆԱՍՅԱՆ 1998

Մինասյան Լ. Գ., Գյուղական բառ ու բան (Փերիա գավառ), Նոր Զուղա, Սբ Ամենափրկիչ վանք, 1998:

ՍԱՐԵԱՆ 1980

Սարեան Ա., Պատմութիւն Չարմահալ գաւառի, Թեհրան, Նաիրի, Չարմահալի հայ ուսումնասիրաց մ-թյուն, 1980:

ԵՐԵՄԵԱՆ 2016

Երեմեան Ա., Սպահանի Չարմահալ գալառը (ազգագրական-պատմական ուսումնասիրություն), Նոր Զոռա, Սպահանի հայոց թեմի կրօնական խորհուրդ, 2016:

**Hayarpi G. Ananyan**

*Institute of Archaeology and Ethnography*

**CHOOB-BAZI (DANCE WITH STICKS) AND DASMAL-BAZI  
(HANDKERCHIEF DANCE) DANCES IN RITUALS  
AND EVERYDAY LIFE OF IRANIAN ARMENIANS**

**Keywords:** dance, Iranian Armenians, Dasmal-bazi, Choob-bazi, performance style, performance, music.

The traditional song-dance ensembles in Armenia during the past ten years frequently have been performing Iranian Armenian dances, notably dances of Armenians of Persia, in their repertoire. Among them, we have emphasized Choob-bazi and Dasmal-bazi dances, and our research was done in relation to them. In the article, we tried to give the characteristics of these two dances, presenting them as completely as possible, and the parallel between the dance name and dance step performed by other peoples living in Iran (Qashqais, Lurs), and their transformations during stage performances by today's traditional groups.

The studies show that the substantive perceptions of the Iranian Armenians, Qashqais and Lurs dances are the same: they all perform those as wedding dances, but there are stylistic differences and borrowings in terms of steps and melody. Observing the dances of these 3 nations, we can say that with the influences and interflow of the dances of the indigenous peoples of Armenia and Iran, a separate dance culture has been formed among the Iranian Armenians, which has its own characteristics and patterns.

**Айарпи Гургеновна Ананян**

*Институт археологии и этнографии*

**ТАНЦЫ ЧУБ-БАЗИ (ТАНЕЦ С ПАЛКАМИ)  
И ДАСМАЛ-БАЗИ (ТАНЕЦ С ПЛАТКОМ)  
В ОБРЯДАХ И БЫТУ ИРАНСКИХ АРМЯН**

**Ключевые слова:** танец, иранские армяне, дасмал-базы, чуб-базы, стиль исполнения, хореография, музыка.

В последние 10 лет действующие в Армении традиционные песенно-танцевальные коллективы часто включают в свой репертуар ирано-армянские танцы. Среди последних мы выделили танцы чуб-базы и дасмал-базы, которым посвящено наше исследование. В данной статье мы постарались дать характеристики этим двум танцам, представив их максимально завершенными:

название танца, танцевальные шаги, их параллели в исполнении других народов, проживающих в Иране (кашкайцы и луры), их трансформации во время сценических выступлений современных традиционных коллективов.

Исследования позволяют говорить о том, что содержательные представления иранских армян, кашкайцов и луров об этих танцах совпадают: все они исполняются как свадебные танцы, но присутствуют стилистические различия и заимствования в шагах и в мелодии. Разбирая танцы этих трех народов, можно сказать, что при влиянии танцев коренных народов Армении и Ирана среди иранских армян сформировалась особая танцевальная культура, имеющая свои особенности и закономерности.

Ներկայացվել է՝ 11.10.2022,  
գրախոսվել է՝ 22.11.2022,  
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

### Անանյան Հայարփի Գուրգենի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ

[ananyanhg@gmail.com](mailto:ananyanhg@gmail.com)

### Անգելուշ Լուսինե Միքայելի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ

[lusineangelush@gmail.com](mailto:lusineangelush@gmail.com)

### Գաբրիելյան Արմինե Արարատի

*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող

[arminegabriel.iae@gmail.com](mailto:arminegabriel.iae@gmail.com)

### Դանիելյան Հենրիկ Ավագի

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող

[henrikh.danielyan@gmail.com](mailto:henrikh.danielyan@gmail.com)

### Խաչատուրեան Յարութին Բիզանդի

Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ

[ha.khatchadourian@free.fr](mailto:ha.khatchadourian@free.fr)

### Հակոբյան Սմբատ Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող

[smbat.hakobian@gmail.com](mailto:smbat.hakobian@gmail.com)

### Հարությունյան Արսեն Էդուարդի

*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Վիճակագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան

Մատենադարանի ավագ գիտաշխատող

[ars.vimagraget@gmail.com](mailto:ars.vimagraget@gmail.com)

### Մալոյան Արման Մանուկի

*պատմական գիտությունների թեկնածու*

«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ

[armanmaloyan@mail.ru](mailto:armanmaloyan@mail.ru)

### Մատիկյան Համիկ Համլետի

*բանասիրական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս

[hasvrej@mail.ru](mailto:hasvrej@mail.ru)

**Մարկոսյան Սալվինե Հակոբի**

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող

[salvi.markosyan@gmail.com](mailto:salvi.markosyan@gmail.com)

**Միրիջանյան Դիաննա Հրաչյայի**

*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող

[dianamirijanyan@gmail.com](mailto:dianamirijanyan@gmail.com)

**Մկրտչյան Լևոն Ալբերտի**

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամամշակութային արգելոց-թանգարանների և պատմական փջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ

[levoncultur@gmail.com](mailto:levoncultur@gmail.com)

**Շամամյան Նարինե Ալբերտի**

*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող

[dancenano@mail.ru](mailto:dancenano@mail.ru)

**Ռամազյան Սամվել Մարտունի**

*բանասիրական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող

[sramaz@mail.com](mailto:sramaz@mail.com)

**Մարիբեկյան Մարիամ Գրիգորի**

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ

[mariamgsaribekyan@gmail.com](mailto:mariamgsaribekyan@gmail.com)

**Վարդանյան Բենիկ Վարդանի**

Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող

[vbenik@yahoo.com](mailto:vbenik@yahoo.com)

**Վարդանյան Նվարդ Խաչատուրի**

*բանասիրական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ

[nvardv@yahoo.com](mailto:nvardv@yahoo.com)

**Փալանջյան Ռուզան Սուրենի**

*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող

[ruzanpal@gmail.com](mailto:ruzanpal@gmail.com)

---

ՀԱԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՒ  
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան  
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Զարդարյան  
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

